«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Քոլեջում դիմորդների ընդունելության աշխատանքների բարելավմանն ընդառաջ, նպատակ է դրվել ուսումնասիրել և վերլուծել վերջին երեք տարիների ընդունելության արդյունքները: ՈԱ պատասխանատուի կողմից իրականացված ընդունելության արդյունքների վերլուծությունը իր մեջ ներառում է 3 ուսումնական տարի՝ 2018-2019, 2019-2020 և 2020-2021:

Վերլուծության արդյունքները առավել արտահայտիչ պատկերելու համար, տվյալները ներկայացվում են գծանկարների տեսքով, ըստ մասնագիտական կրթական ծրագրերի:

0911.01.5 «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության հիմնական ընդհանուր կրթության հիմքով

Գծանկար № 1



0911.01.5 «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության հիմնական ընդհանուր կրթության հիմքով դիմորդների թիվը վերջին երեք տարվա ընդունելության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ ընդունելության ցուցանիշը համեմատած 2019-ի զգալի նվազել է, մոտ 70%-ով: Այսինքն եթե 2019 թվականին Քոլեջ դիմել են 22 դիմորդ և ընդունվել՝ 20-ը, ապա 2021 թվականին դիմել և ընդունվել են՝ 6 դիմորդ: Այստեղից կարելի է առանձնացնել մի քանի պատճառ, որը պետք է դեռ ուսումնասիրել:

1. «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության հանդեպ հետաքրքրության, կամ աշխատաշուկայի պահանջարկի նվազումը:
2. Քոլեջի կողմից «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության վերաբերյալ ոչ արդյունավետ իրազեկման, տեղեկատվական աշխատանքները:
3. Քոլեջի կողմից ոչ գրավչական ուսումնական գործընթացի կազմակերպումը:
4. Մանսագիտական ապահովվածությունը, ռեսուրսները և այլն:

0911.01.5 «Դեղագործություն» մասնագիտության հիմնական ընդհանուր կրթության հիմքով

Գծանկար № 2



0911.01.5 «Դեղագործություն» մասնագիտության հիմնական ընդհանուր կրթության հիմքով դիմորդների թիվը վերջին երեք տարվա ընդունելության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ ընդունելության ցուցանիշը համեմատած 2019-ի ընդհանրապես չի փոխվել, ոչ նվազել է, ոչ էլ ավելացել: Այսինքն, կարելի է եզրակացնել, որ համապատասխան ամբիոնը իրականացնում է կայուն իրազեկման, տեղեկատվական և դիմորդների հավաքագրման աշխատանքներ: Այնուհանդերձ, անհրաժեշտ է ակտիվացնել պոտենցիալ դիմորդների հետ տարվող աշխատանքները:

0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով

Գծանկար № 2.1



Ինչ վերաբերում է 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով դիմորդների թիվը վերջին երեք տարվա ընդունելության արդյունքների վերլուծությանը, ապա տվյալները ցույց են տալիս, որ առավել հաջող եղել է 2020 թվականի ընդունելության ցուցանիշը: Համեմատած 2019 թվականի հետ, 2020թ.-ին այն որոշ չափով ավելացել է, սակայն 2021 թվականի նվազել է 6-ով: Այնուհանդերձ, այստեղ ևս անհրաժեշտ է ակտիվացնել պոտենցիալ դիմորդների հետ տարվող աշխատանքները:

0916.01.5 «Քույրական գործ» մասնագիության հիմնական ընդհանուր կրթության հիմքով

Գծանկար № 3



Ինչ վերաբերվում է 0916.01.5 «Քույրական գործ» մասնագիության հիմնական ընդհանուր կրթության հիմքով վերջին երեք տարվա ընդունելության արդյունքներին, ապա վերլուծությունը ցույց տվեց, որ ի տարբերություն 2019 թվականի արդյունքների, 2021 թվականին այն 3 անգամ նվազել է: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ուժեղացնելու պոտենցիալ դիմորդների հետ տարվող աշխատանքները, ներգրավելով նաև ուսանողներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, վերլուծության արդյունքները վկայում են այն մասին, որ վերջին երեք տարիների ընթացքում «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ դիմորդների թիվը զգալի նվազել է: Պատճառները կարող են լինել տարատեսակ, ինչպես օրինակ աշխատաշուկայի, պոտենցիալ գործատուների և արտաքին շահակիցների հետ ոչ արդյունավետ աշխատանքները, համագործակցությունը, խնդիրների և կարիքների վերհանումը և այլն:

ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով Ընդունուղ հանձնաժողովի պատասխանատուի երեք տարվա հաշվետվությունների արդյունքների վերլուծությունը և ուղղորդվելով Քոլեջում կիրառվող ՊԻՍԲ շրջափուլի դրույթները, Քոլեջի 2019-2024թթ. Ռազմավարական զարգացման ծրագրի գործողությունների պլան-ժամանակացույցով պայմանավորված, պալանավորվել են համապատասխան գործողություններ:

Կատարվել է պաշտոնական տվյալների համեմատական վերլուծություն և ընդհանրացում, որի արդյունքում կատարվել է համապատասխան եզրակացություն:

Հաշվի առնելով այս ամենը որպես բարելավում առաջարկվում է.

1. Հանձնարարել պրակտիկայի և կարիերայի բաժնի պատասխանատունին ակտիվացնել մասնագիտական կողմնորոշման աշխատանքները, ինչպես Երևանում և ՀՀ մարզերում, այնպես էլ արտասահմանյան տարբեր կազմակերպությունների հետ:
2. Մշակել և տպագրել տեղեկատվական բուկլետներ և անհրաժեշտ թերթիկներ:
3. Հանձնարարել Ուսանողական խորհրդին կազմակերպել քարոզչական այցեր երևանյան և ՀՀ մարզերի դպրոցներ:
4. Կամզակերպել բաց դռների օրեր, հրավիրելով արտաքին շահակիցներին, Քոլեջի գործունեությանը ծանոթացնելու նպատակով:
5. Բարելավել մասնագիտական կաբինետները և լաբորատորիաները:
6. Ընդլայնել համագործակցության շրջանակը, ներգրավելով տարբեր ուսումնական և գիտական կառույցներ:
7. Կազմակերպել տարբեր առարկայական դասընթացներից վարպետանց դասեր:
8. Հրավիրել բարձրակարգ մասնագետներին փորձի փոխանակման նպատակով:
9. Հանձնարարել մանկավարժական խորհրդին ներկայացնել առաջարկություններ դիտարժան և արդիական միջոցառումների ծրագրերի վերաբերյալ:

ՈԱ պատասխանատու՝ _____ Ա.Գ.Գյոզալյան

27.08.2021թ.